

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՍ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Շարունակ. Արարար, 1885 թ. Ե.)

Գ.Լ. Թ.

Պետրոս Ա. կաթողիկոս շատ դժբաղդ ժամանակի մէջ սկսեց վարել հայրապետական իշխանութիւն, որովհետեւ ներքին և արտաքին խռովութիւնները անպակաս էին: Գազիկ շահնշահի վախճանմամբ՝ նորա Յովհաննէս—Սմբատ և Աշոտ որդիքը սկսեցին միմեանց դէմ պատերազմել՝ հակառակ միմեանց թագաւորելու համար: Պետրոս ձեռնտուութեամբ հայ նախարարների թէև հաշտեցրեց այս երկու եղբայրներին, բայց հաշտութիւնը երկար չըտևեց, որովհետև Աշոտ թագաւորելու բուն տենչանք ունենալով՝ հիւանդ ձեւացաւ, ի տես հրաւիրեց իւր թագաւորացեալ Յովհաննէս—Սմբատ եղբորը, և թակարդի մէջ կալանաւորելով՝ յանձնեց իւր սիրելի Ապիրատ իշխանին՝ սպանելու համար: Բայց Ապիրատ ազատեց Յովհաննէս—Սմբատ թագաւորին՝ ասելով. « Անողորմ՝ բռնաւորից աւելի լաւ է Հայոցս թագաւոր ունենալ իմաստուն մարդուն »: Աշոտ չըհանգուրժելով իւր այս խարդաւանքի անյաջող ելքին և նորա հետեանք անարգանացը, դիմեց կայսեր և նորանից զօրք ստանալով նուաճեց իւր այն նախարարներին՝ որոնք իւր ապիրատութիւնները տեսնելով՝ հեռացել էին:

Այս իսկ ժամանակները (1021 թ.) Սկիւթացիք յարձակուեցին Հայաստանի վերայ և հասան մինչև Վասպուրական աշխարհը: Սենեքերիմ արծրունի թագաւորը իւր իշխանութեան քայքայեալ դրութիւնը աչքի առաջ ունենալով, և նկատելով որ չի կարող դիմադրել ներքին և արտաքին պատերազմներին, թրդթով խոստացաւ Յունաց կայսեր, Վասպուրական աշխարհը նորան յանձնել՝ եթէ տրուի իրան Սեբաստիա քաղաքը իւր շրջակայքով: Այս թուղթը Սենեքերիմ մեծամեծ ընծաների հետ ուղարկեց Կոստանդնուպօլիս իւր Դաւիթ որդու և Ռշտունեաց Նղիշէ եպիսկոպոսի ձեռքով: Կայսրը ընդունեց Սենեքերիմի առաջարկութիւնը, և Սենեքերիմ իւր աւագանիով հանդերձ փոխա-

դրուեց Սեբաստիա. նորան հետեւեց բազմաթիւ ժողովուրդ, որոնք եփրատի ափերին Ակն և Արաբկեր քաղաքները շինեցին. հետեւեցին և շատ վանականներ և յատկապէս Նարեկայ վանքի վանականները, որոնք իրանց հետ վերցրած Ս. Գրիգոր Նարեկացու մարմինը ղետեղեցին Սեբաստիայում նորա անուամբ շինած Նարեկայ վանքի մէջ. Սենեքերիմ՝ որ հետը տարել է Վարազայ Սուրբ Խաչը, այնտեղ մի վանք շինեց ղետեղելու համար: Պետրոս կաթողիկոս և ու գնաց Սեբաստիա և մի քանի տարի այնտեղ մնաց: Իսկ Սկիւթացիք, որ ասպատակումէին Վասպուրականում իրանց արշաւանքը զանազան կողմեր ուղղեցին, և իրանց գլխաւոր Տուղրիլ բէկի առաջնորդութեամբ հասան Նախիջևան. այն տեղից ասպատակ սփռելով մինչև Նիգ գաւառը, գերեցին բնակիչներին, աւերեցին եկեղեցիքն ու վանորայքը և ստիպեցին գերեալներին ուրանալ քրիստոնէական հաւատը: Այս որ լսեց Վասակ Պաշլաւունի սպարապետը՝ որ այդ ժամանակ Բջնիումն էր, հրաւէր կարգաց իւր իշխանութեան տակ եղած իշխաններին և զօրականներին. նոցա հետ համախումբ խոստովանելուց ու հաղորդուելուց յետոյ նախ քան յարձակուելը թշնամեաց վերայ իւր զօրքերին խրախուսելու համար ասաց. « Աստուծոյ վերայ դնենք մեր յոյսը և նորանով առաքինանանք պատերազմի մէջ. որովհետև նորա անուամբն է առաջիկայ պատերազմը Քրիստոսի եկեղեցու պայծառութեան համար. և եթէ Յիսուս Քրիստոս կամենումէ որ այս սուրբ խոստովանութեան համար մեր անձը դնենք, չլիախենանք ուրեմն մեր հաւատոյ թշնամիների հետ պատերազմելուց » :

Այս պատերազմի մէջ երբ յաղթութիւնն ի գլուխ հանած Վասակ Պաշլաւունի յանհոգս փառաբանումէր Աստուծոյ, թշնամիներից մինը գաղտ մտած՝ քարով խփեց նորա գլխին, որով և վախճանուեց հաւատոյ նահատակ Վասակ: Իսկ Տուղրիլ Հայաստանից անցնելով Պարսկաստան՝ տիրեց ամբողջ երկրին և ամիրապետի հաճութեամբ վերականգնեց 400 տարուց հետէ ընդհատեալ Պարսից թագաւորութիւնը:

Պետրոս կաթողիկոս որ Սեբաստիայումն էր՝ երբ Յունաց Վասիլ կայսրը հասաւ Խաղտեաց աշխարհը՝ գնաց նորա մօտ ըստ խնդրոյ Յովհաննէս — Սմբատ թագաւորի և ներկայացնելով Յովհաննէս Սմբատի թուղթը, որով խոստանումէր նա իւր մահից յետոյ Անին

Յուճաց թողնել, խնդրեց որ կայսրը հովանաւորէ Բագրատունեաց թագաւորութեանը: Կայսրը սիրո՛ւ ընդունեց կաթողիկոսի պատգամաւորութիւնը և ուրախութեամբ խոստացաւ կատարել ինչ որ խնդրումէր. մեծամեծ պատիւներ տուեց և առաջարկեց Ջրօրհնեաց տօնին գետի վերայ Ջրօրհնեաց հանդէսը կատարել՝ որ այս հանդէսը կատարելիս ըստ պատմելոյ ժամանակակից պատմչոյ՝ գետի ջուրը կանգ առնելուն համար զետաղարձ կոչուեց: Պետրոս կաթողիկոս այս պատգամաւորութիւնից յետոյ վերադարձաւ Սեբաստիա և այնտեղ Սենեքերիմ թագաւորի մօտ բնակութիւն հաստատեց մինչև նորա մահը: Սենեքերիմի կտակին համեմատ նորա մահից յետոյ նորա մարմինը Վասպուրական և Վարազայ սուրբ խաչը 1027 թ. փոխադրուեց Վարագ:

Պետրոս կաթողիկոս Սենեքերիմի մահից յետոյ եկաւ Անի, բայց թէ թագաւորը և թէ իշխանք կասկածուեին նորանից և տփգոհ էին նորա երկար ժամանակ Սեբաստիայում կենալովը: Պետրոս Ա. իմանալով այս՝ լռելեայն հեռացաւ և գնաց Վասպուրական՝ որ Յուճաց ձեռքն էր և բնակուեց Ջորոյ վանքում:

Թագաւորը և իշխանները կասկածելով որ եթէ նոր կաթողիկոս ընտրեն գուցէ Պետրոս չըհրաժարուի և հայրապետութիւնը բաժանուի, ուստի նորան հրաւիրեցին գալ և վարել իւր իշխանութիւնը, և երբ նա Անի հասաւ, 1034 թ. կալանաւորեալ ուղարկուեց Բջնոյ աւանը՝ Գրիգոր Մագիստրոսի Վահրամ հօրեղբօր մօտ, և հետեւեալ տարին Սանահնայ վանահայր Դիոսկորոս կաթողիկոս նշանակուեց. բայց Դիոսկորոս անպիտան և վատթար մարդկանց եպիսկոպոս ձեռնադրելով, յայտնի յանցանքի պատճառով պատժուած եպիսկոպոսներին նորից պաշտօն տալով, արժանաւորներին իշխանութիւնից ձգելով և նոցա ինչքը յափշտակելով՝ բոլորին էլ առելի դարձաւ. իսկ հայ հոգեւորականութիւնը այս անարժան գործերը տեսնելով բանադրեց նորան և նորա պաշտպաններին. թագաւորը և աւագանին կասկածելով թէ մի գուցէ այս բանը վատ հետեւանք ունենայ, նորից խնդրեցին Պետրոսին գալ և իւր իշխանութիւնը վարել և երբ նա հրաժարուեց՝ նոցա հրաւիրմամբ և խնդրանօք Աղուանից Յովսէփ կաթողիկոս եկաւ Անի և իւր գահերեցութեամբ Անւոյ Դ. ժողով գումարեց 1036 թ. 4000 ի մօտ մարդկանց ներկայութեամբ. Դիոսկորոսին գահընկէց արեց ու ուղարկեց Սանահն աքսոր, նորա

ձեռնադրածներին ապաշխարանքի ենթարկեց, և Պետրոսին նորից կաթողիկոս հրատարակեց:

Նոյն 1036 թուին Դվնայ Ապուստար Պարսիկ ոստիկանը օգնութեամբ Պարսից Տուղրիլ թագաւորի սկսեց առապատակել. այրումէր եկեղեցիքը, ջարդումէր խաչերը, ստիպումէր ուրանալ քրիստոնէութիւնը և ոմանց բռնի թլիստութեամբ: Գուգարաց Գաւիթ Անհողին կոչեցեալ թագաւորը տեսնելով որ Ապուստար իւր երկրումն ևս պատրաստութեամբ նոյն չարիքը գործել, Աղուանից Յովսէփ կաթողիկոսին հրաւէր ուղարկեց որ եպիսկոպոսներով իւր բանակը հասնի Քրիստոսի եկեղեցու պաշտպանութեան համար դիմագրաւելու. նոյնպիսի հրաւէրներ ուղարկեց նաև Հայոց եպիսկոպոսներին ու վանորայքը. հրաւէր կարգաց բոլոր աշխարհին՝ ասելով. « Կամ բոլորս միասին Քրիստոսի համար մեռնենք, կամ յաղթելով և դուրս քշելով թշնամուն՝ ազատենք եկեղեցին. ուրեմն, ով որ մարտիրոսական մահուան է ցանկանում՝ թող մեզ մօտ գայ »:

Նուտով խմբուեցին Գաւթի մօտ եպիսկոպոսներ, քահանաներ, կրօնաւորներ խաչ աւետարանով և աշխարհական մարդիկ ոմանք զինուորեալ՝ և ոմանք անզէն. երբոր սկսեց պատերազմը, հոգևորական դատը միաբերան գոչեց. « Արի Տէր, օգնեա՛ մեզ և փրկեա՛ զմեզ վասն անուանիդ քում սրբոյ »:

Քրիստոնեայք քաջալերուած և սպառազինուած սուրբ հաւատոյ պաշտպանութեան սիրով աներկմիտ յուսով յարձակուեցին Ապուստարի վերայ, ահագին կոտորածներ արին, յաղթեցին և բաղմաթիւ աւարներով վերադարձան ու փառաւորեցին Աստուծոյ անունը:

Այս խռովութիւնները նոր պաղարած էին Յոյնք Յովհաննէս Սմբատի մահից. յետոյ նորա ձեռագրին համեմատ պահանջեցին Անի քաղաքը. իսկ Յովհաննէս Սմբատի եղբօր սրդին Գագիկ թագաւորելով, ընդդիմանումէր և ասում՝ որ Անի Բագրատունեաց հայրենի ժառանգութիւնը լինելով Յովհաննէս Սմբատ ինքն մենակ իրաւունք չունէր ձեռագրով Յունաց տալու: Սագիս Վիստ Սիւնեաց իշխանը, որ կամենումէր թագաւորել, զրգւումէր Յոյներին պահանջել անպատճառ Անին. և յաջողելով այս կասկածը իրանից հեռացնել՝ միևնոյն ժամանակ Յունաց կամակատար ներկայացրեց Գրիգոր մագիստրոսին, որին Գագիկ սկսեց հալա-

ծել. Գրիգոր մագիստրոս թողեց Արարատեան աշխարհը և գնաց Տարօն, բայց այնտեղ ևս չը կարողանալով ազատուել Գագիկի հալածանքից՝ հեռացաւ Կոստանդնուպօլիս՝ ուր մանկութիւնից դաստիարակուել էր և այն տեղ հանդիպելով Մանուշէ անունով մի մահմետական հմուտ գիտնականի, կրօնական վէճի մէջ, երբ իւր հակառակորդը Սուրբ Գրոց ոտանաւոր գրուած չը լինելը մի խոշոր պակասութիւն էր համարում, Գրիգոր մագիստրոս որպէս զի ցոյց տայ թէ ոտանաւորը իբրեւ մարդկային արուեստ, մի առանձին արժանիք չէ կարող տալ Աւետարանին, երեք օրուայ մէջ Սուրբ Գրոց պատմութիւնները ոտանաւորի դարձրեց, որով սքանչուցած Մանուշէ՝ քրիստոնեայ դարձաւ:

Վեստ Սարգիս Պետրոս կաթողիկոսին Գագիկի հետ քսութեամբ թշնամացնելուց յետոյ՝ խորհուրդ տուեց Յունաց Մոնթմախոս կայսեր Անին գրաւելու համար սիրոյ պատրուակով Գագիկին իւր մօտ հրաւիրել և յարգելանս պահելով տիրել ոչ միայն Անիին, այլև վերջացնելով Բագրատունեաց թագաւորութիւնը՝ տիրել ամբողջ Հայաստանին: Կայսրը այսպէս էլ արեց. Գագիկին սիրոյ նամակ գրեց իւր մօտ հրաւիրելով Անույ գրաւման մասին թուղթը յետ տալու և բարեկամութեան դաշն կապելու պատրուակով, բայց Վահրամ Պահլավունի զօրավարը իմանալով Յունաց նենգութիւնը, խորհուրդ չըտուեց Գագիկին գնալ. կայսրը երկրորդեց բայց երբ իւր հրաւերը այս անգամ էլ չընդունուեց այն ժամանակ Վեստ Սարգիսի դրդմամբ նախարարները առարկելով թէ կրկնակի հրաւեր մերժելը գուցէ առիթ տայ կայսեր զայրոյթին և պատերազմական յարձակմանց՝ խորհուրդ տուին Գագիկին գնալ, խոստանալով և Պետրոս կաթողիկոսի ներկայութեամբ երգուելով ցյետին շունչ պաշտպանել Անին. Գագիկ ճարտահատեալ՝ երգման թուղթը և Անույ պահպանութիւնը յանձնելով կաթողիկոսին՝ գնաց Կ. Պօլիս և այլ ևս չը վերադարձաւ: Վեստ Սարգիս Պետրոս կաթողիկոսի հետ նախարարներից ոմանց հաճութեամբ հպատակութեան թուղթ ուղարկեց կայսեր, ուղարկեց նաև Անույ ու արքունեաց բանալիները: Կայսրը տիրելով Անիին՝ ուրիշ դաւաճանների հետ միասին մեծամեծ պարգևներով վարձատրեց Պետրոս կաթողիկոսին և Գրիգոր Մագիստրոսին, որ համախոհ դաւաճանող նախարարներին՝ Արարատեան նահանգում եղած իւր կալուածները տուեց Յունաց և ի փոխարէն՝ ստացաւ Միջագետքի դքսութիւնը:

Յոյնք Անիին տիրելուց յետոյ, Դուին քաղաքին ևս կամեցան տիրել քայց տեղւոյն ոստիկան Ապուսւար իւր վերայ յարձակուած յոյներին յաղթելուց յետոյ զայրացած՝ սկսեց հալածել քրիստոնեաներին և յատկապէս հայերին՝ ստիպելով ուրանալ իրանց հաւատը։ Վահրամ Պահլաւունի իբրեւ հայր քրիստոնէից և սրաշտոյան եկեղեցւոյ՝ յարձակուեց Ապուսւարի վերայ, հալածեց նորան մինչև Դուին քաղաքը, և մենակ շատ յառաջ գնացած ու թշնամեաց մէջ մտած լինելով՝ կալանաւորուեց, 80 ամեայ հասակում՝ 1047 թ. նահատակուեց քրիստոնէական հաւատոյ համար և թաղուեց Սահահոյ վանքում։

Յոյնք Անւոյ թագաւորութիւնը վերջացնելուց յետոյ ձեռք զարկին կաթողիկոսութիւն ևս վերջացնել. և որ Պետրոս կաթողիկոսին մինչև Անին գրաւելը շողոքորդումէին, այնուհետև պատճառելով թէ նա աշխատումէ հայերին ապստամբեցնել՝ սքսորեցին Կարնոյ Արծն քաղաքը, իսկ Պետրոս մինչև հեռանալը, Անիում իրան տեղակալ կարգեց իւր քեռորդի Խաչիկ եպիսկոպոսին։ Յոյնք սորանով էլ չը բաւականացան, այլ հենց նոյն ինքն Յայտնութեան տօնի օրը կալանաւորեցին Պետրոս կաթողիկոսին և տարան Խաղտոյ - Առիճ բերդը, իսկ կաթողիկոսի տեղակալ Խաչիկ եպիսկոպոսին ևս ուղարկեցին Սեաւքար։ Մի քանի ամսից Կայսեր հրամանով Պետրոս կաթողիկոսը Կ. Պօլիս տարուեց իսկ Խաչիկ ուղարկուեց նորից Անի։ Կայսրը Պետրոսին երեք տարի պահեց Կ. Պօլսում, զանազան սնտի պատիւներ տուեց շնացնել աշխատելով, մինչև որ Կ. Պօլսում եղած հայ մեծամեծների և Դագիկ թագաւորի միջնորդութեանը զիջանելով թոյլ տուեց հեռանալ Պօլսից, և Պետրոս կաթողիկոս եկաւ Սեբաստիա, ուր հինգ տարուց յետոյ 1058 թուին վախճանուեց և թաղուեց տեղւոյն Ս. Նշանի վանքում, հայոց աշխարհի ազէտներին և աւերածութեանց ականատես լինելով և 40 տարի վարելով հայրապետական իշխանութիւն։

Պետրոս Ա. հակամիտութեամբն զէպի Յոյները կասկածելի դառնալով հայ իշխանների և ժողովրդի առաջ, Յոյներից էլ բաւական տառապանք կրեց ի խրատ և ի զգուշութիւն այն բոլոր մարդոց՝ որոնք իրանց ազգային շահերը կրղզեն իրանց սնտի փառասիրութեան։ Որովհետև դաւաճանութիւնը որչափ և հաճելի լինի, դաւաճանը միշտ ատելի է ու ատելի։

Պետրոս Ա. բացի զանազան ճառերից՝ գրեց Մարտիրոսաց, Հանգստեան և Մանկունք կոչեցեալ շարականները: Պետրոս կաթողիկոսի ժամանակով որպէս մատենագիր յայտնի էր Գրիգոր մագիստրոս Պաշլաւունի, որ աշխարհական բարձր պաշտօններ և տիտղոսներ ունենալով հանգերձ, գրոց, մանաւանդ Սուրբ Գրոց բաւական հմտութիւն ունէր, և ըստ խնդրոյ Մանուշէ մահմետականի՝ ոտանաւոր համառօտեց Աստուածաշնչի պատմութիւնը. գրեց զանազան թղթեր՝ որոնց մէջ նշանաւոր են Ասորւոյ կաթողիկոսին գրածները Թոնդրակեցի աղանդաւորների պատճառով. այս աղանդաւորների դէմ գինուած էր Գրիգոր Մագիստրոս ոչ միայն գրով այլ և իւր իշխանական ուժովը: Որպէս մատենագիր նշանաւոր էր նաև Անանիա Սանահնեցի՝ որ Պօղոսի 14 թղթոց մեկնութիւնը, և Հայաստանեայցս եկեղեցւոյ ուղղափառութիւնը պաշտպանելու համար Բան Հակածառ-ութեան ընդդէմ երկաթնակաց ճառը գրեց: Նշանաւոր էր նաև Արիստակէս Լաստիվերոցի, որ ողբալից և սրտաշարժ կերպով ճառագրեց իւր ժամանակի արհաւիրքները:

ԳԼ. Ժ.

Պետրոս Ա. -ին 1058 թ. յաջորդեց Անիում իւր քեռորդին և տեղակալն Խաչիկ Բ: Տուկիժ կայսրը յաջորդելով իւր հօրը, սկսեց հայերին շատ նեղել. նա լսելով Պետրոս գետադարձ կաթողիկոսի մահը՝ գրաւեց նորա գիւղերն ու ագարակները և Խաչիկից պահանջումէր հանգուցեալ հայրապետի գոյքը՝ որ կարծումէր շատ մեծ լինել, համարելով թէ Բագրատունի հարստութեան գանձերը Գագկի Պօլիս տարագրուելուց յետոյ կաթողիկոսարանին յանձնուած կը լինին: Տուկիժ այս անտեղի պահանջի համար Պօլիս տարաւ Խաչիկ Բ. կաթողիկոսին. և երբ տեսաւ թէ Խաչիկ բացէ իբաց հրաժարվումէ իւր պահանջը կատարելուց ապացուցանելով որ այդպիսի գանձ իրան յանձնուած չէ եղել, կայսրը բարկացած, կաթողիկոսարանը իւրաքանչիւր տարի վճարելու որոշեալ քանակութեամբ հարկի տակ գրեց, և սպառնացաւ Յոյն կաթողիկոս և իշխան կարգել. և մինչ Յոյներից մի աշխարհական կիւրապադատութեան պաշտօն և մի հոգեւորական՝ կաթողիկոսական իրաւունք ստանալ խնդրելով՝ խոստանումէին ծանր հարկեր վճարել, այդ բաղդախնդիրներից մէկը նոյն օրը ծանր հիւանդացաւ, իսկ միւսը մեռաւ, այսպիսով Աստուած իւր եկեղեցին այս տեսակ ապօրէն բռնաբարութիւնից ազատեց:

Յուճաց կայսերութիւնը, որ իւր անիրաւութեամբ գրաւած Հայաստան աշխարհը Սկիւթացոց և Պարսից ասպատակաւորների կոխան էր թողել, — փոխանակ սլաշտպանելու և օրինաւոր հարկ ստանալու, ապօրինաբար հարկի տակ էր դնում այն կաթուղիկոսարանը, որ ազատ էր մահմետական և կուսպաշտ բարբարոսների ժամանակ. սորանով չլքաւականացաւ այդ կայսերութեան գահակալ Տուկիծ, այլ սկսեց հայերին յոյն դարձնելու համար քանահար լինել. ուստի և կրօնական խնդիրների խարհրդածութեան համար փոխանակ հոգեւորական ներկայացուցիչներին դիմելու՝ ձեռք առաւ Փոքր Հայոց իշխաններին. կանչեց իւր մօտ Սենեքերիմ թագաւորի Ատովմ և Ապուսահլ որդիներին, որոնք իմանալով կայսեր նպատակը, հետներն առան գիսնական կարծեցեալ ոմն Յակովբ վարդապետի:

Յակովբ մարդահաճութեան համար ընդունեց կայսեր առաջարկութիւնը և ի դիմաց բոլոր Հայոց ստորագրութիւնն տուեց յունադաւան լինելու. այս ստորագրութեան վերայ հիմնուած երբ կայսրը առաջարկեց արքայազն Ատովմ և Ապուսահլ իշխաններին նորից յունական ծէսով մկրտուել, նոքա հրաժարուեցին. Այս կրօնական տագնապը շարունակվում էր, երբ հայ իշխանների հրաւիրմամբ Գազիկ բացակայութիւնից դառնալով Կոստանդնուպօլիս՝ ներկայացաւ կայսեր, և ապացուցանելով Յակովբ վարդապետի ինքնին, առանց ազգի հաճութեան տուած թղթի անտեղութիւնը՝ առաւ և պատուեց. խոստացաւ գրել մի դաւանարանական թուղթ՝ Հայաստանեացի եկեղեցու ուղղափառութեան համար և վիճել Յուճաց վարդապետների հետ. Կայսրը զիջաւ այս առաջարկութեան, և Գազիկ ստանձնեալ թուղթը պատրաստելուց յետոյ՝ կայսեր հրամանով Ս. Սոփիայի եկեղեցում ժողովուած յոյն կղերի սուաջ կարդաց և իմաստութեամբ ու հմտութեամբ պաշտպանելով իւր ստանձնած գործը, մանաւանդ ըստ ծիսական մասին, որոնք եկեղեցու ազգայնութեան առ հաւատչեան են, ապացուցեց Յուճաց պահանջի անտեղութիւնը. Յուճաց ազգի, որ հայ հողին տիրանալուց յետոյ կամենում էին հայ հոգուն ևս տիրանալ:

Կրօնական վէճերը արքունիքից և կենդրոնից փոխանցուեցին գաւառները, և ատելութիւնը հայի ու յոյնի մէջ այն աստիճան սաստկացաւ, որ սկսեցին միմեանց դաժաւորել, հարստաւորել

և տանջել. իրրեւ օրինակ այս ատելութեան՝ ի միջի այլոց համարելու է այս երկու գէպքը *):

Անեցի ոմն Գէորգ իմանալով Յունաց բարքը, ազատ շրջումէր Անտիոք քաղաքում. Յոյները իմանալով որ նա հայ է՝ բռնեցին, մօրուքը կտրեցին և արփաքսեցին. իսկ Գէորգ վարձեց հինգ հարիւր թուրք և ի վրէժ իրան հասցրած անարգանացը Անտիոք գաւառում շատ աւաններ աւերակ դարձրեց, տանն և երկու գիւղեր այրեց և վաթսուն յոյներ կալանաւորելով Անտիոքի դռան մօտ սպանեց՝ տանելով. «Ես եմ Անեցի Գէորգը, որի մօրուքը կտրեցիք. առէք ձեր աշխատանքի վարձը»:

Միանգամ էլ եօթանասուն հոգի հայեր կարաւանով հասած Անտիոք քաղաքը, որովհետեւ բարեկենդանի օրեր էին, սկսեցին հրապարակում քաջօթեագ ուրախութիւն տնել: Յոյները երբ տեսան այս՝ գիմեցին դէպի նոցա. սկսեցին արհամարհել, անարգել, յոխորտալով աքացել. հայերը համբերութիւնից դուրս եկած՝ յարձակուեցին նոցա վերայ և բրերով մեծամեծ հարուածներ տալուց յետոյ միքանիսին ևս սպանելով հալածեցին մինչև տեղւոյն Ս. Պետրոսի եկեղեցին. քահանայք խաչ տւետարանի ձեռին հազիւ կարողացան մեղմել հայերի արդարացի զայրոյթը:

Այս կրօնական սպայքարից յետոյ Գազկի և Ատովմ Արծրունու խնդրանքով երեքամեայ արգելանքից յետոյ Խաչիկ Բ. կաթողիկոս թոյլտուութիւն ստացաւ ոչ թէ Անի, այլ Փոքր — Հայոց Ջահան գաւառի Թաւրուր աւանը վերադառնալ, ուր և լսելով Հայաստան երկրի աւերը, Անւոյ կոտորածը, և Յոյներից կրած տառապանքը, անհնարին տրտմութիւնից հիւանդացաւ և վախճանեց 1064 թ. վեցամեայ կաթողիկոսութիւնից յետոյ, որի մեծ մասը վտարանդութեան մէջ անցկացրեց մեծամեծ նեղութիւններով:

Խաչիկ Բ. կաթողիկոսի մահից յետոյ մի տարի հայրապետական աթոռը թափուր մնաց. և որովհետեւ յոյները արգելք էին լինում նոր կաթողիկոսի ընտրութեան, որպէս զի անառաջնորդ հայերին շուտով կարողանան յունադաւան դարձնել, այս պատճառով էլ կաթողիկոսի ընտրութիւնը յետաձգվումէր, մինչև Աբասեան Գազիկ թագաւորի դուստր Մարիամ թագուհին՝ որ շատ սիրելի էր Յունաց կայսերուհուն, նորա միջնորդութեամբ

(*) Չամչ. հատ. Բ. երես 971 — 972.

կայսրից նոր հայրապետի ընտրութեան հրաման առաւ: Այս թոյլ-
տուութիւնից յետոյ Աբասեան Գագիկ որ Կարսից փտարանդի՝ Մա-
մնդաւումն էր կենում, բազմաթիւ եպիսկոպոսների և վարդա-
պետների ներկայութեամբ 1065 թուին գումարեց Մամնդաւի Ա.
Ժողովը, ուր կաթողիկոս ընտրուեց Գրիգոր Մագիստրոսի Վահ-
րամ որդին, որ պքսութեան տիրոսով իւր հօրը յաջորդելուց ու
ամուսնանալուց յետոյ կամովին անապատ էր քաշուել և կրօ-
նաւորական կեանք էր վարում: Վահրամ 1065 թուի Ապրիլ ամ-
սումը Մամնդաւի մէջ կաթողիոոսական սուրբ օծումն ընդունեց
և Գրիգոր Բ. կոչուեց:

Գրիգոր Բ. վարժ յունական դպրութեան և հմուտ արտաքին ու
Սուրբ Գրոց, յունարէնից և ասորերէնից թարգմանեց տօնելի
սրբերի վկայաբանութիւնը, ուստի և կոչուեց Վկայասէր: Գրիգոր
Վկայասէր երբ զբաղուած էր գրոց թարգմանութեամբ, վանսրէից
շինութեամբ ու բարեկարգութեամբ և իւր հօտի հոգեւոր պիտո-
յից հոգացողութեամբ, տեսնելով դարձեալ աւեր և կոտորած
Սունաց և Պարսից կողմից՝ ի սիրտ և ի հոգի վշտացած կա-
մենումէր առանձնանալ, ուստի և իւր ատենադպիր Գէորգ լո-
ւեցուն ըստ ցանկութեան հայ իշխանաց Թաւրուրում օծեց կա-
թողիկոս ու ինքն առանձնացաւ Սեաւ — Աերան մենաստանը:
Այս առանձնութեան մէջ ևս ժողովուրդը դիմումէր Վկայասէրին
իրեւ մեծ հայրապետի, Գէորգ լուեցի վշտացած այս բանից մե-
ծամեծ շփոթութիւններ յարուցանելով մինչ կամենումէր ժողովով
կարգընկէց անել Գրիգոր Վկայասէրին, իշխաններն ու մեծա-
մեծները շփոթութեանց առաջքը առնելու համար Վկայասիրի
գահերեցութեամբ 1072 թ. Սեաւ — Աերան Ա. ժողովը գումարե-
լով գահընկէց արին Գէորգին և ուղարկեցին Տարսոն ուր և
վախճանեց, իսկ Վկայասէրն Գրիգոր բնակուեց Մուրտառասուն
կոչուած տեղը:

Ամն Փիլարտոս հայ — հռոմ բռնաւոր, որ ասպատակումէր
ամենայն կողմ, գալով Մարաշ, Տարսոնոյ իշխան Թոռնիկ Մամիկո-
նեանին հրաւիրեց իւր մօտ իրան գործակից լինելու, բայց երբ նա
յանձն չառաւ, Փիլարտոս Գրիգոր Վկայասէրին ուղարկեց համո-
զելու որ գայ և երբ այս պատգամաւորութիւնն ևս անյաջող ան-
ցաւ՝ Փիլարտոս յարձակուեց Թոռնիկի վերայ, բայց սաստիկ ջարդ
կրելով՝ յետ դարձաւ Թաւրուր, կանչեց իւր մօտ Գրիգոր Վկայա-

սէրին, որ առ երկիւղին չըգնաց, այլ ուղարկելով հայրապետական գաւազանն ու քօղը՝ առաջարկեց Պետրոս գետադարձի քեռորդի Սարգիս վարդապետին կաթուղիկոսացնել, և Փիլարտոս Ջահան գաւառի Հոնի քաղաքում ժողովակ կազմելով՝ Սարգսին 1073 թ. կաթուղիկոս օծել տուեց Հոնիում:

Վկայասէր կասկածելով Փիլարտոսից՝ եկաւ Անի, ուր մի քանի ամիս կենալուց յետոյ իւր քեռորդի Բարսեղ եպիսկոպոսին տեղակալ կարգեց, գնաց Սեաւ—Նեառը, այցելեց Կոստանդնուպօլիս, Հռոմ՝ և Երուսաղէմ, ուր Փրկչի տնօրինական տեղերին երկրպագելուց յետոյ գնաց Եգիպտոս, մի տարի կացաւ այն տեղ, Մեմփիսի քաղաքի Հայոց վերայ իւր քեռորդի Գրիգորիսին եպիսկոպոս ձեռնադրեց, յետոյ տեղւոյն թագաւորից մեծամեծ պատիւներ ստացաւ և վերադարձաւ ու առանձնացաւ Սեաւ—Լերան Արեգի վանքում խստակրօն կենօք Սուրբ Գրոց ընթերցման և թարգմանութեանց պարապելով:

Այս ժամանակները վախճանեց Հոնիում Սարգիս Կաթուղիկոսը և յաջորդեց Թէոդորոս կամ Թորոս, սորա օրով յունական տտելութիւնը սկսեց նորից սաստկանալ մինչև այն աստիճան՝ որ Գրիգոր Վկասէրի եղբայր Վասակին սպանումեն Անտիոքում, նախանձելով որ նա հայ լինելով՝ այնպիսի մեծ պատուի է հասել: Մի յոյն աբեղայի նենգութեան զոհ գնաց նաև Շիրակացի Վեստ—Խաչատուր իշխանը, որին յոյն աբեղան խեղդեց նորա քնած ժամանակ բարձր բերանին դնելով:

Բագրատունեաց և արծրունեաց հարստութեանց անկումից յետոյ Փոքր-Հայք և յատկապէս Կիլիկիայի կողմերը հայ իշխանների և մեծամեծների ապաստանարանը դարձան. այդ տեղերն էին Արծրունեաց արքայազն իշխանները, Խաչիկ Վասպուրականի թոռն՝ Ասլիխարիպ իշխանը, որ Տարսնի և Մամեստիոյ տէր կարգուելով կայսրից՝ նորոգեց Նամրօն, ուր տեղի բնակութեան կալաւ Արցախու մի մասի իշխան Յշին՝ իւր երկրից վտարանդի Կոստանդնուպօլիս գնալուց և այն տեղից Կիլիկիա վերադառնալուց յետոյ, Փոքր—Հայքում վտարանդի շրջումէր Գագիկ վատաբաղդ վերջին թագաւորն Բագրատունեաց, որ լսելով թէ Կեսարիայի Մեսրապօլիտը առ կրօնական ատելութեան՝ որ առ հայս իւր շան անունը արմէն էր գրել, Կեսարիայում պատահելիս՝ գնաց

նորա մօտ ստուգելուց յետոյ Մետրապօլիտին չարաչար և անարգական մահաւամբ սպանեց և ինքն սպանուեց յոյներէից։

Յունական ատելութիւնն ևս առաւել ճարակ էր գտնում մահաւանդ նորանով, որ օրինաւոր կաթուղիկոսն Գրիգոր Վկայասէր փոխանակ իւր հօտը կառավարելու՝ կրօնաւորական կեանք էր փարում։ Իւր հաւանութեամբ կարգուած կաթուղիկոսները, որպիսիք էին Սարգիս և քաղցրաձայն ալէլուեա երգելուն համար Ալախօսիկ կոչեցեալ Թէոդորոս կամ Թորոս՝ հակաթու և ապօրինի նկատուելով՝ յունէին հարկաւոր ազդեցութիւնը եկեղեցութարոյական շինութեան համար։ Անեցիք պահանջումէին Վկայասէրից կամ գալ Անի՝ և վարել կաթուղիկոսական իրաւունքը կամ թոյլ տալ իւր տեղակալ Բարսեղին՝ որ օծուի կաթուղիկոս։ Եւ ստանալով Վկայասիրի հաճութիւնը, Աղուանից Ստեփաննոս կաթուղիկոսի ներկայութեամբ օծումեն Բարսեղին։ Փիլարոսոս ևս տեսնելով որ Թէոդորոս չէ կամենում հայրապետական Աթոռը Թաւրուրից Մարաշ փոխադրել՝ ինքնակամ ոմն Պօղոս վարդապետի կաթուղիկոս օծել տուեց։ Այսպիսով մի հայրապետական աթոռի անուամբ հայրապետ են կոչւում մի և նոյն ժամանակ Գրիգոր Վկայասէր, Թէոդորոս և Պօղոս՝ Վիլիկիայում և նորա շրջակայքում, իսկ Բարսեղ՝ Անիում։ Այս կաթուղիկոս կոչուածներէ մէջ որովհետեւ Գրիգոր Վկայասէր կամովին հրաժարուած էր, օրինաւոր կաթուղիկոս Անույ Բարսեղն էր, որ տեսնելով հայ ժողովրդի առաւաղանքը պարսիկների երեսից՝ բազմաթիւ եպիսկոպոսներով գնաց Պարսից Մելիք Շահ թագաւորի մօտ, և առանձին հրովարտակ ստացաւ ժողովրդի անդորրութեան և հարկաց թեթեւութեան համար։ Մելիք Շահ Բարսեղ կաթուղիկոսին պատուեց իրաւունք տալով ձողաբարձ խաշադրօշով շրջել և ազատօրէն իւր եկեղեցւոյ գործերը տնօրինել։

Բարսեղ վերադառնալով Անի, անցնումէ գէպ ի Փոքր—Հայք, իշխանութիւնից ձգումէ Թէոդորոս և Պօղոս կաթուղիկոսներին։ Իւր այցելութեան ժամանակ հրապուրուելով մի երիտաւարդ Ստեփաննոս անուն արեւայի քարոզութեամբ՝ որի վերայ շատ գանգատներ կային, փոխանակ նորա վերայ եղած ամբաստանութեան միտ դարձնելով պատժելու՝ վարձատրումէ պարգևելով իւր ձեռքի գաւազանն ու մատանին և կարգելով Շուղր Անապատի վանահայր։ Իւր այցելութիւնները շա-

րունակելով՝ Բարսեղ վերադառնում է Անի։ Վախճանում են Քեդորոս և Պողոս ապօրինի կաթուղիկոսները, իսկ Գրիգոր Վկայասէր նորից Նրուսաղէմ գնալուց յետոյ Քեսուն գաւառի Կարմիր վանքումն է բնակութիւն հաստատում, և իւր ծերութեան վերջին օրերին՝ լսելով որ Բարսեղ կաթուղիկոս այցելութեամբ նորից հասել է Միջագետք՝ Գող — Վասիլ իշխանի հետ կանչում է իւր մօտ և նոցա խնամքին է յանձնում Ապիրատ իշխանի Գրիգոր և Ներսէս որդիքը, որ իւր քեռորդիքն էին, խնդրելով կրթել բարեպաշտութեամբ և իմաստութեամբ։ Բարսեղ կաթուղիկոս և Գող — Վասիլ այս մանուկներին, (որոնց ընկերանում են Սարգիս Շնորհալի և Իգնատիոս Մեկնիչ Առկասու աւետարանի) յանձնում են Սահփանոս վարդապետին։

Բարսեղ կաթուղիկոս Քեսունից երբ կամենում էր Նրուսաղէմ գնալ բազմաթիւ ուղեկիցներով՝ Վարդահեր աւանում երբ տանեաց վերայ ժամերգութիւն էր կատարում, տանիքը փուլ եկաւ և իրան սաստիկ փտանգուած տեսնելով՝ պատուիրեց շուտով Սեաւ Լեառը հասցնել և դեռ չըվախճանած՝ հայրապետական քօւր և գաւազանը յանձնելով Գրիգոր Վկայասէրի քեռորդի և իւր խնամոց յանձնուած Գրիգորին՝ պատուիրեց նորան իւր տեղ կաթուղիկոս օծել, և այսպէս երեսնամեայ կաթուղիկոսից յետոյ վախճանեց։ Գրիգոր Վկայասէրի բացի Սրբոց Վկայաբանութիւնից գրաւոր նշանաւոր երկասիրութիւններն են պատմութիւն Վարուգ Ոսկերերանի, Թարգմանութիւն Պրոկղի Ներքողի առ Յովհան Ոսկերերան. և ըն։

(Շարունակել)

Յ. Վ. Ս